



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«07» 11 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 238 - 24

Նախաձեռնող՝

«Քար և ավազ-Ջրաբեր» ՍՊԸ
Արշակունյաց 75 Ա, բն. 8

Գործունեությունը՝

Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրի
հարավ-արևմտյան տեղամասի արդյունահանում
Կոբայքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 238 - 24

«07» հոկտեմբեր 2024թ.

Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Քար և ավազ-Ջրաբեր» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	/Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայր

Ներածական մաս. Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասը գտնվում է Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրի վարչական տարածքում: Մոտակա բնակավայրերն են՝ Նուռնուսը՝ 4,3 կմ, Ջրաբերը՝ 2 կմ, Կապուտանը՝ 3,4 կմ, Բյուրեղավանը՝ 4,7 կմ, իսկ Աբովյան քաղաքը՝ շուրջ 6 կմ հեռավորությունների վրա:

Հայցվող տարածքը շահագործված է դեռևս ԽՍՀՄ տարիներից: Ամբողջ տարածքը խախտված է և հողաբուսական ծածկույթ չկա:

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով հայցվող տարածքը հանդիսանում է համայնքային սեփականության արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի համար նախատեսված, 07-049-0283-0001, 07-049-0283-0017 կադաստրային ծածկագրերով հողամասերի հետ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:



Նկարագրական մաս. Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀԽՍՀ պաշարների տարածքային հանձնաժողովի կողմից 1965թ. մարտի 31-ի N139 արձանագրությամբ հետևյալ կարգերով և քանակներով՝

$$A+B+CI = 25253.8 \text{ հազ խմ:}$$

Ըստ պինդ օգտակար հանածոների պաշարների դասակարգման՝ հանքավայրը պատկանում է 1-ին խմբին:

Արդյունահանման նպատակով հայցվող տարածքի կորդինատներն են Arm WGS-84 համակարգով:

X	Y
4466322.6833	8470267.0905
4466513.4120	8470265.0525
4466534.1815	8470411.7660
4466457.8553	8470416.5847
4466377.8371	8470459.7928
4466323.8666	8470309.5017

Սույն նախագծով նախատեսվում է.

տեղամասը շահագործվելու է առանց հորատապայթեցման, բաց լեռնային աշխատանքների միջոցով, 528.5 հազ. մ³ /մարվող պաշար/, տարեկան 26425 մ³ արտադրողականությամբ: Արդյունահանվող պաշարների քանակը կազմելու է 465.4 հազ.մ³, տարեկան արտադրողականությունը՝ 23270 մ³,

-արդյունահանված օգտակար հանածոն նախատեսվում է տեղափոխել միջինը 1.5 կմ հեռավորության վրա գտնվող ջարդիչ կայանք: Ջարդիչ կայանքը զբաղեցնում է 1,5 հա մակերես և գործում է 1980-ական թվականներից՝ նախկին ԽՍՀՄ ժամանակաշրջանից,
-հանույթային աշխատանքները կատարվելու են էքսկավատոր ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով,

-բացահանքի աշխատանքների կազմակերպման համար հանքավայրում նախատեսվելու է արտադրական հրապարակ իր անհրաժեշտ կառույցներով: Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը կազմելու է 30 մ: Կատարվելու է արդյունաբերական հրապարակի կարգաբերում՝ 30 մ³ ծավալով:

- շահագործման ավարտից հետո կատարվելու է խախտված տարածքների ռեկուլտիվացիա, -ծառայման ժամկետը՝ 20 տարի:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը՝ 205 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 195 մ,
- մակաբացման ապարները՝ 740 մ³,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 17.6 մ,
- օտարման մակերեսը՝ 3.0 հա:



Նախագծային կորուստները, որոնք բնամասերի տեսքով մնում են ընդերքում, թողնվելու են բացահանքի կողերում՝ հանքաստիճանների եզրերի թույլատրելի թեքությունն ապահովելու համար և կազմելու են 63020 մ³ կամ 11.92%:

Հանույթային աշխատանքները կատարվելու են էքսկավատոր ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով:

Բացահանքի բացումը կատարվելու է բացահանքի կենտրոնական մասի 1685.0 մ բարձրության հորիզոնից: Գոյություն ունեցող մուտքային ավտոճանապարհի բարեկարգում, որի երկարությունը 182 մ, 6 մ լայնությամբ և առավելագույն թեքությունն է 60.77%: Հաջորդ հորիզոնները (մինչև 1670.0 մ բարձրություն) կմշակվի այս ավտոճանապարհով՝ աստիճանաբար կտրտվելով: 1665.0 մ բարձրության հորիզոնը կմշակվի 1670.0 մ բարձրության նիշից դեպի ներքև իջնող կտրող կիսախրամով: 1660.0-1655.0 մ բարձրության հորիզոնները կմշակվեն դեպի ներքև խորացող ներքին կիսախրամներով, որի թեքությունն է 100.0%:

Մակաբացման ապարները բացահանքի եզրագծի մեջ առկա են միայն բացահանքի հարավ արևմտյան մասում 800 մ² մակերեսով, որի քանակն է 740 մ³ (փխրուն-բեկորային այլուվիալ-դեյուվիալ առաջացումներ՝ կավավազներ), որոնք կարող են հեռացվել բուլդոզերի օգնությամբ առանց նախապես փխրեցման: Մակաբացման ապարները հեռացվելու են 10-րդ տարվա ընթացքում՝ սկսած բացահանքի 1670.0 մ բարձրության հորիզոնը մշակելիս: Շահագործման ընթացքում փխրուն-բեկորային դեյուվիալ առաջացումները բուլդոզերով տեղափոխվելու են բացահանքի հարավ արևմտյան մասում ձևավորվող լցակույտ /N1 լցակույտ/: Լցակույտի զբաղեցրած մակերեսն է 220 մ²:

Բացահանքը մշակվելու է ընդլայնական ընթացաշերտերով, միակող մշակման համակարգով:

Օգտակար հանածոյի արդյունահանումը և բարձումը տրանսպորտային միջոցների մեջ նախատեսվում է կատարել 2.5 մ³ շերտի տարողությամբ Յ-2503 մակնիշի էքսկավատորի միջոցով:

Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ բացահանքի տարածքում կատարվող արդյունահանման աշխատանքները, ժամանակավոր լցակույտերի ձևավորումը, ճանապարհներին տրանսպորտի տեղաշարժը: Սակայն, քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է, հետևաբար աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ: Հաշվարկներով հիմնավորվել է, որ աղմուկի և թրթռման մակարդակը գտնվում է նորմայի սահմաններում:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվել է մթնոլորտային օդի աղտոտվածության հաշվարկներ: Ցրման հաշվարկների արդյունքների համաձայն սահմանային թույլատրելի արտանետումներ չեն գերազանցում թույլատրելի նորմերը:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերը ու կենցաղային աղբը:

Խմելու և տեխնիկական ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով կամ ընկերության կողմից վարձակալած տեխնիկական միջոցներով:

Շահագործման ավարտից հետո նախատեսվում է կատարել խախտված տարածքների ռեկուլտիվացիա: Հարթեցումը կկատարվի բուլդոզերի օգնությամբ: Կհարթեցվի բացահանքի հատակի ողջ մակերեսը՝ 2.199 հա, և արդյունաբերական հրապարակը՝ 270 մ²: Ընդհանուր



մակերեսը կլինի՝ 2.226 հա: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա:

Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 1243000 ՀՀ դրամ, որից կենսաբանական ռեկուլտիվացիայի համար նախատեսվել է 260.6 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետվությունում եղած տեղեկատվության համաձայն՝ նախատեսվող տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Հայցվող տեղամասի սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան, բնության, պատմության հուշարձանները բացակայում են:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,

- տաք և չոր եղանակին փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով նախատեսվում է իրականացնել բեռնվող լեռնազանգվածի, արտադրական հրապարակի, մերձատար ճանապարհների ջրցան,

- նախատեսվում է կանաչապատել արտադրական տարածքը արագ աճող ծառատեսակներով կամ թփերով,

-բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումն իրականացվելու է հանքավայրի շահագործման ավարտից հետո,

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաներում՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,

- բանեցված կապարե կուտակիչները պահվելու են մետաղական տարողություններում կամ արկղերում/տուփերում, հետագայում նախատեսվում է հանձնել վերամշակման լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպությանը,

-կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբավայր՝ կնքված պայմանագրի հիման վրա,

-աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով;

- աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում Ջրաբեր բնակավայրում:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1.մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,

2. հողերի քիմիական կազմի աղտոտումը նավթամթերքներով մշտադիտարկում՝ տարեկան մեկ անգամ,

3. աղմուկի վերահսկողություն՝ տարեկան մեկ անգամ,

4. վայրի բնություն, կենսամիջավայր, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մշտադիտարկում՝ եռամսյակը մեկ անգամ:

Մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել մոտ 350.0 հազ. ՀՀ դրամ:



Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների իրականացման համար տարեկան նախատեսվում է մասնահանել 160.000 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

-Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

- Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ շահագործման աշխատանքների ավարտից երկու տարի առաջ, անհրաժեշտ է հանքի փակման ծրագիրը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:



ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Քար և ավազ-Ջրաբեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ջրաբերի լիթոիդային պեմզաների հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝




Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Հովիկ Մեսրոպյան